ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. «Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հետ կապված խնդիրները» վերտառությամբ Նախագծի 4-րդ բաժնում նախատեսվում է, որ ինտեգրման քաղաքականության նպատակային խումբ կարող են համարվել ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինները, ծնողները կամ զավակները, ՀՀ քաղաքացու կամ ՀՀ մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինների կամ մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) և ազգությամբ հայերը:

Հաշվի առնելով այն փաստը, որ ինտեգրման քաղաքականության նպատակային խմբում կարող են ընդգրկվել նաև երեխաները՝ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել վերջիններիս կարիքներին և Նախագծով համապատասխան երաշխիքներ սահմանել:

Այսպես, Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողությունները ձեռնարկելիս առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի «երեխայի լավագույն շահերին»: Նշված Կոնվենցիայով ամրագրված երեխայի լավագույն շահի վերաբերյալ հոդվածին արված թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) համաձայն՝ երեխայի լավագույն շահերի հաշվի առնելը ենթադրում է երեխայի՝ սեփական կարծիքներն ազատորեն արտահայտելու իրավունքի ապահովումը, ընդ որում՝ երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի իր արտահայտած տեսակետներին: Միաժամանակ, ցանկացած որոշում, որի կայացման ժամանակ հաշվի չի առնվել երեխայի տեսակետը կամ դրան պատշաճ ուշադրություն չի

[1] Այսուհետ՝ Նախագիծ

դարձվել, հնարավորություն չի տալիս երեխային որոշելու, թե որն է իր լավագույն շահը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծով ամրագրել երեխայի լավագույն շահը՝ որպես ինտեգրման քաղաքականության սկզբունքներից մեկը:

2. Նախագծի 5-րդ բաժնում նշվում է, որ իմիգրանտների ընտրված խմբերի ինտեգրման նպատակով նախատեսվում է իրականացնել հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպում:

Այսպես, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի փախստականների վերաբնակեցման ուղեցույցի համաձայն[2]՝ ծրագիր կազմելիս լեզվի ուսուցման դասընթացները պետք է ճկուն ձևաչափ ունենան: Մասնավորապես, վերաբնակեցման ծրագրի շրջանակներում պետք է հնարավորություն ստեղծել լեզվի դասընթացները նաև առցանց, հեռակա ուսուցման ծրագրով կազմակերպելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով նախատեսել նաև լեզվի ուսուցման ծրագրում առցանց և հեռակա ուսուցման հնարավորությունը:

3. Նախագծով նախատեսվող ծրագրերի նկարագրությունից պարզ չէ, թե որքանով է ապահովվում վերջիններիս հասանելիությունն ու մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այսպես, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի սկզբունքներից է հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և ներառումը հասարակությունում, ինչպես նաև նրանց համար հնարավորությունների հավասարությունն ու մատչելիությունը:

Բացի այդ, նույն կոնվենցիայի 9-րդ կետի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիարժեք մասնակցության նպատակով պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովելու տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը:

Ելնելով վերոգրյալից՝ փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականությունը պետք է համապատասխանեցվի հաշմանդաամություն ունեցող

[2] http://www.refworld.org/docid/405189284.html

անձանց հատուկ կարիքներին: Օրինակ՝ հայերեն լեզվի ուսուցման և քաղաքացիական կողմնորոշման դասընթացը մշակելիս պետք է հաշվի առնվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար տվյալ միջոցառումների, ծառայությունների մատչելիության ապահովման սկզբունքը:

4. Նախագիծը չի նախատեսում մշտական մեխանիզմի ստեղծում/նշանակում, որը կիրականացնի փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության արդյունավետության մշտադիտարկում՝ այն հետագայում բարելավելու նպատակով:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծով սահմանել մշտադիտարկման մեխանիզմ, որով պարբերաբար կուսումնասիրվի ինտեգրման ընթացքում արձանագրված առաջընթացը և դուրս կբերվեն համակարգային խնդիրները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ